ՀԿԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ՀԿԱԾ-ԶԹ 2021/1

ք. Երևան «01» փետրվար 2021թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գագիկ Միրիջանյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրենի Դ. Գիշյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պամանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝

1.1.1. ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ներդրված ավտոմատացված մոդուլների՝ այն է՝ 1. ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության, 2. «ՃՈ» ծառայության էլեկտրոնային հարցումների, արգելանքների և բռնագանձումների կիրառման ավտոմատացված համակարգերի, 3. ՀՀ Բանկերին արգելանքների և բռնագանձումների, 4. ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության հարցումների և բռնագանձումների, 5. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության հարցումների, 6. ՀՀ ԱՆ Պետական ռեգիստրի հարցումների և արգելանքների, 7. ՀՀ Անշարժ գույքի պետական կադաստրի, ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայի հարցումների, 8. ՀՀ Սոցիալական ապահովության ծառայության հարցումների և արգելանքների, 9. Երևանի քաղաքապետարանի վարչական ակտերի, 10. Կենտրոնական Գանձապետարանի վճարումների, 11. «ՃՈ» ծառայության վարչական ակտերի, «ՃՈ» ծառայության էլեկտրոնային հարցումների, 12. ՀայՓոստ և ՀԿԱԾ Վարույթի որոշումների տվյալների փոխանակման, 13. Հաշվետվությունների և դրանց տպման ձևերի, 14. Ըստ Պատվիրատուի կառուցվածքային ստորաբաժանումների համակարգի տեղեկատվություն անվտանգ տարանջատման, 15. ՎԵԲ սերվերների (Կադաստր, Դեպոզիտարիա, Վարչական ակտեր, Բանկեր, Մաքսային, ՃՈ) աշխատանքային անընդհատության, 16. Հիմնական Տվյալների շտեմարանի և ռեզերվային շտեմարանի միջև աշխատանքների անընդհատության, ինչպես նաև մոդուլների կարգաբերման հարցերում խորհրդատվության տրամադրման, անհրաժեշտության դեպքում համակարգում գործող մոդուլների փոփոխություններ ու լրացումներ կատարելու՝ ծրագրային սպասարկման ծառայություններ, , 17. Ավտոմատացված համակարգերի ծրագրային սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորության ստանձնում

1.1.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի ինտեգրում «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) էլեկտրոնային համակարգին, 2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՊԵԿ-ի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում, 3. Վճարումների մշակումների պարբերական գործարկում, 4. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական ռեգիստրի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում, 5. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Երևանի քաղաքապետարանի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող № 4 հավելվածով սահմանված ժամկետներում՝ հաշվի առնելով միավոր ժամանակում Կատարողի կողմից որևէ աշխատանք իրականացնելու հնարավորությունը:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Պահպանել <Անձնական տվյալների պաշտպանության մասին> ՀՀ օրենքի դրույթները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14400000 (տաս չորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև

պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	**«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ**
ք.Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 900011288025	Հ/Հ 1930047614510100
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1

« 01 » _____ 2021 թ. կնքված
<u>ՀԿԱԾ-ԶԹ 2021/1</u> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջոցների կոդը՝ ըստ ԳՄՊ (CPV) դասակարգման	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գին՝ դրամով ՀՀ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72261160/1	**<u>Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ՝</u>** ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության, «ՃՈ» ծառայության էլեկտրոնային հարցումների, արգելանքների և բռնագանձումների կիրառման ավտոմատացված համակարգերի, ՀՀ Բանկերին արգելանքների և բռնագանձումների, ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության հարցումների և բռնագանձումների, ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության հ-արցումների, ՀՀ ԱՆ Պետական ռեգիստրի հարցումների և արգելանքների, ՀՀ Անշարժ գույքի պետական կադաստրի, ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիայի հարցումների, ՀՀ Սոցիալական ապահովության ծառայության հարցումների և արգելանքների, Երևանի քաղաքապետարանի վարչական ակտերի, Կենտրոնական Գանձապետարանի վճարումների, «ՃՈ» ծառայության վարչական ակտերի, «ՃՈ» ծառայության էլեկտրոնային հարցումների, ՀայՓոստ և ՀԿԱԾ Վարույթի որոշումների տվյալների փոխանակումը, Հաշվետվությունների և դրանց տպման ձևերի, Համակարգի տեղեկատվություն անվտանգ տարանջատումն ըստ Պատվիրատուի կառուցվածքային ստորաբաժանումների, ՎԵԲ սերվերների (Կադաստր, Դեպոզիտարիա, Վարչական ակտեր, Բանկեր, Մաքսային, ՃՈ) աշխատանքային անընդհատության, Հիմնական Տվյալների շտեմարանի և ռեզերվային շտեմարանի միջև աշխատանքների անընդհատության, Խորհրդատվության տրամադրումը մոդուլների կարգաբերման հարցերում, Անհրաժեշտության դեպքում Համակարգում գործող մոդուլների փոփոխություններ ու լրացումներ կատարելու՝ ծրագրային սպասարկման ծառայություններ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի կատարելագործում /ինտեգրում/ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) էլեկտրոնային համակարգի հետ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՊԵԿ-ի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում, Վճարումների մշակումների պարբերական գործարկում, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական ռեգիստրի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում անցում օնլայն ռեժիմի, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Երևանի քաղաքապետարանի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում, ավտոմատացված համակարգերի ծրագրային սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը	դրամ	14 400 000 /տասն չորս միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ	1	ք. Երևան, Հալաբյան 41ա	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.2021

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 1930047614510100

_____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«01» _____ 2021 թ. կնքված
<u>ՀԿԱԾ-ԶԹ 2021/1</u> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/1	**<u>Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ՝</u>**		2400000	3600000	4800000	6000000	7200000	8400000	9600000	10800000	12000000	13200000	14400000	14400000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 1930047614510100

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«01» _____ 2021 թ. կնքված
ՀԿԱԾ-ԶԹ 2021/1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
ՀՀ _____	ՀՀ_____
_____	_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 21 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 21 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 21 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N ___ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«___» _____2021 թ. կնքված
<u>ՀԿԱԾ-ԶԹ 2021/1</u> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 21 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 21 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված № 4
«01» _____ 2021 թ. կնքված
***ՀԿԱԾ-ԶԹ 2021/1** ծածկագրով պայմանագրի*

ԺԱՄԿԵՏՆԵՐ

№№	Աշխատանքի անվանումը	Տևողություն* (աշխատանքային օր)
1	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի ինտեգրում «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) էլեկտրոնային համակարգին,	30 օր
2	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Պետական եկմուտների կոմիտեր միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում	30 օր
3	Վճարումների մշակումների պարբերական գործարկում	30 օր
4	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական ռեգիստրի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում	30 օր
5	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Երևանի քաղաքապետարանի միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության մոդուլի արդիականացում	30 օր

** աշխատանքների հերթականությունը և սկիզբը որոշում է Պատվիրատուն, ընդ որում՝ աշխատանքների սկիզբ է համարվում Պատվիրատուի կողմից տվյալ աշխատանքների իրականացման համար նախատեսվող տեխնիկական առաջադրանքի հանձնումը Կատարողին:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

_____
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Սիսակյան 22, բն. 106
ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 1930047614510100

_____
/ստորագրություն/
Կ.Տ